

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Վաչագան Բարեպաշտի հրամանով Արցախի _____ թագավորական ամառանոցում գումարվեց ժողով, որին մասնակցում էին Արցախի, Ուտիքի, ինչպես նաև Բուն Աղվանքի ազնվականներն ու եպիսկոպոսները: (1 միավոր)

10. 1912 թ. նոյեմբերին Գևորգ Ե. կաթողիկոսը հատուկ կոնդակով ո՞ւմ լիազորեց մեծ տերություններին ներկայացնել հայկական բարենորոգումների հարցը: (1 միավոր)

11. Ո՞ր վանքն էր Անիի Բագրատունյաց թագավորների տոհմական դամբարանը: (1 միավոր)

12. 1877–1878 թթ. Զեյթունի ապստամբության ղեկավարն էր Ֆոնուզի վանահայր _____ եպիսկոպոսը, ում գլխավորած ջոկատը բազմիցս աչքի էր ընկել մարտերում: (1 միավոր)

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Հայոց կաթողիկոսի անունը համապատասխանեցնել նրա օրոք տեղի ունեցած իրադարձությանը: (1 միավոր)

- 1) Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի
- 2) Հովհաննես Ը. Կարբեցի
- 3) Ղուկաս Ա. Կարնեցի
- 4) Ներսես Ե. Աշտարակեցի
- 5) Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի
- 6) Աբրահամ Գ. Կրետացի

1	
2	
3	
4	
5	
6	

- ա) Երևանի նահանգի ստեղծումը
- բ) Ներսիսյան դպրոցի կանոնադրության հաստատումը
- գ) Հայոց եկեղեցու կանոնադրության («Պոլոժենիե») ընդունումը
- դ) Հայկական առաջին պարբերականի հրատարակումը Մադրասում
- ե) Հայոց կաթողիկոսը Նադիր շահի մեջքին կապում է շահական իշխանության խորհրդանիշ սուրը
- զ) Հայկական ծխական դպրոցների առաջին ընդհանուր կանոնների հրապարակումը

14. Հայոց եկեղեցու տոնը համապատասխանեցնել տոնակատարության ժամանակին: (1 միավոր)

- 1) Մ. Հարության տոնին նախորդող կիրակի օրը
- 2) Մեպտեմբերի 14-ի մերձակա կիրակի օրը
- 3) Հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը
- 4) Մեպտեմբերի 28-ի մոտակա կիրակի օրը
- 5) Մ. Հարության տոնին հաջորդող 40-րդ օրը
- 6) Օգոստոսի 15-ի մերձակա կիրակի օրը
- 7) Մ. Հարության տոնին հաջորդող 65-րդ օրը
- ա) Վարագա Մ. Խաչի տոն
- բ) Խաչվերաց կամ Մ. Խաչի տոն
- գ) Մ. Մարիամ Աստվածածնի վերափոխման տոն
- դ) Կաթողիկե Ս. Էջմիածնի տոն
- ե) Մ. Համբարձման տոն
- զ) Ծաղկազարդ
- է) Մ. Թարգմանչաց տոն

1	
2	
3	
4	
5	
6	
7	

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. «Նրա իմաստության համբավը տարածվեց բոլոր ազգերի մեջ. Թեորա անունով մի կոստանդնուպոլսեցի իմաստասեր լսելով սրա հոչակը՝ իր գրքերը բառնալով գրաստների վրա, եկավ փորձելու և վերահասու լինելու նրա իմաստությանը: Եկավ, շատ օրեր զրուցեց նրա հետ ու գտավ ամեն բանի մեջ հմուտ, նաև Սուրբ Հոգով լցված»:

Հայոց ո՞ր նշանավոր կաթողիկոսի մասին է խոսքը: (1 միավոր)

16. «... Բայց որպես իմ ժողովրդի հոգևոր հովիվ, ես չեմ կարող չտազնապել և Ձեր պայծառափայլությանը չմատնանշել այն, որ Թուրքիայում հայ բնակչությունն ապրելու է խորապես վշտալի օրեր, եթե Ռուսաստանի ուշադրությունը Հայոց հարցի նկատմամբ ժամանակավորապես թուլանա»:

Ռուս ո՞ր պաշտոնյային ուղղված նամակից է մեջբերված հատվածը: (1 միավոր)

17. «... Բսկ եթե եկել է վերջը, ապա այն ինչո՞ւ չընդունենք պատվով ու քաջությամբ և ոչ թե ողորմելի զեռունի պես թշնամու առաջ սողալով: Մեր պատմության անցյալ դարերը լի են քաջության օրինակներով, ներկված են նահատակների արյամբ: ... Դրա համար է, որ զանգվածային կոտորածներով ու մահերով հարուստ մեր կենսագրությունը չի ունեցել և երբեք էլ չպիտի ունենա վերջին վերջակետ»:

1) Ե՞րբ է գահակալել մեջբերված խոսքերի հեղինակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: (1 միավոր)

2) Նրա գահակալության օրոք ո՞ր թվականին է կազմվել այն փաստաթուղթը, որով «Ամենայն Հայոց կաթողիկոսի անձը համարվում էր սուրբ և անձեռնմխելի»:

(1 միավոր)

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Տրված բացատրություններից ո՞ր երկուսն են ճիշտ. (1 x 2 = 2 միավոր)

- 1) Վան քաղաքի միջնաբերդում գտնվող Միերի դուռ կոչվող ժայռի վրա Սարդուրի արքան փորագրել տվեց իր տերության բոլոր աստվածների անունները:
- 2) Ըստ զրադաշտական կրոնի՝ չար ուժերի ստեղծողն ու հովանավորը Ահուրամազդան էր:
- 3) Նորակառույց կամ վերանորոգված եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունն անվանում են նավակատիք:
- 4) 622 թ. Մուհամմադին հպատակվեց նաև իր հայրենի քաղաքը՝ Մեքքան, որտեղ նա կուռքերից մաքրեց Մեքքայի գլխավոր սրբավայրը՝ Կաաբան (արաբերեն՝ խորանարդ):
- 5) Հռոմի Կոստանդիանոս Մեծ կայսրը 325 թ. մայիսին Նիկիա քաղաքում հրավիրեց Առաջին տիեզերական ժողովը, որը դատապարտեց Արիոսի ուսմունքը և նրան հեռացրեց եկեղեցուց:

19. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ. (1 x 2 = 2 միավոր)

- 1) 1836 թ. ընդունված Հայոց եկեղեցու կանոնադրությամբ Ռուսաստանի տիրապետության ներքո գտնվող Արևելյան Հայաստանը և հայկական շրջանները բաժանվում էին 6 հոգևոր թեմերի՝ Երևանի, Ղարաբաղի, Վրաստանի-Իմերեթիայի, Հյուսիսային Կովկասի, Բեսարաբիայի-Նոր Նախիջևանի և Աստրախանի:
- 2) 1850 թ. թուրքական կառավարությունը հատուկ հրամանագրով ճանաչում է բողոքական եկեղեցին՝ որպես հայոց եկեղեցուց անջատ կրոնական համայնք:
- 3) Հայոց եկեղեցու և ողջ հայության մշակութային, հոգևոր և հասարակական կյանքում նշանակալից իրադարձություն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական պարբերականի՝ «Էջմիածին» հանդեսի հրատարակումը:
- 4) 1912 թ. հուլիսին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը գավառներից ստացած բողոքների հիման վրա բողոքագիր է ներկայացնում Թուրքիայի արդարադատության նախարարությանը՝ պահանջելով վերջ տալ բռնություններին:
- 5) 1920 թ. փետրվարին կազմված դաշնագրով Մայր Աթոռի լիազորները, Սինոդի անդամները, թեմակալ առաջնորդները և Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորները պետք է օգտվեն անձի անձեռնմխելիության իրավունքից:

№ 20
Շարադրանք (2 միավոր)

Ներկայացնել քրիստոնեական բարոյագիտության ընդհանուր բնութագիրը:

- ա. Քրիստոնեությունը և նախորդ շրջանի բարոյագիտությունը
- բ. Բարոյագիտության քրիստոնեական ուսմունքը: